

371

v<sup>n</sup>-18

20/110  
1330

Ս. ՄԱԿԱՐԵՆԿՅԱՆ

17 MAR 2010

**Թ Ն Ո Ղ Ա Կ Ա Ն**  
**ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

371  
—  
Մ-18

ԼՈՒՍՅՐՈՍ

ԵՐԵՎԱՆ

1940

ՕՔՆ/ԵՊ

371  
Մ-18

Ա. ՄԱԿԱՐԵՆԿՈ

ОБЪЕКТНЫЙ  
ЭКЗЕМПЛЯР

**Ծ Ն Ո Ղ Ա Կ Ա Ն  
ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Քարգմանեց. ՍԻՄԱԿ

L O T U Z P U S

ԵՐԵՎԱՆ

1940

21 JUN 2013

45.739

# Մ Ն Ո Ղ Ա Կ Ա Ն

## Հ Ե Ղ Ի Ն Ա Կ Ո Ւ Յ Յ Ա Ն Մ Ա Ս Ի Ն

(ԳՐՈՂ-ՄԱՆԿԱԿԱՐԺԻ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԻՑ)

Մեր հայրն ու մեր մայրը հասարակությունից լիազորված են դատախարակելու մեր հայրենիքի ապագա քաղաքացուն, նրանք պատասխանատու են հասարակության առջև: Դրա վրա էլ հիմնվում է նրանց ծնողական իշխանությունը և նրանց հեղինակությունը երեխաների աչքում:

Սակայն պարզապես անհարմար կլինի ընտանիքում երեխաների առջև ապացուցել ծնողական իշխանությունը, շարունակ հենվելով հասարակության այդպիսի լիազորության վրա: Երեխաների դատախարակությունն սկսում է այն հասակից, երբ ոչ մի տրամաբանական ապացույց և առհասարակ հասարակական իրավունք առաջադրել չի

Госуда. библ. ин-т  
ордена Ленина  
Библиотека СС  
им. В. И. Ленина

36243

48

3255

20830-59

Արեւի: Այնինչ առանց հեղինակութեան  
դաստիարակ հնարավոր չի:

Վերջապես, հեղինակութեան բուն իմաս-  
տը հենց այն է, որ նա ոչ մի ապացույց  
չի պահանջում, որ նա մեծի անկասկածելի  
արժանիքն է համարվում, իբրև նրա ույժն  
ու արժեքը, որ տեսանելի է, այսպես ասած,  
մանկական հասարակ աչքով:

Երեխայի աչքում հայրն ու մայրը պետք  
է ունենան այդ հեղինակութիւնը: Հաճախ  
լսում ես այսպիսի հարց. ի՞նչ անեմ երե-  
խային, եթե նա չի լսում: Ա՛հա, հենց այդ  
«չի լսում»-ը նշան է, որ ծնողները նրա  
աչքում հեղինակութիւն չունեն:

Ո՞րտեղից է առաջ գալիս ծնողական հե-  
ղինակութիւնը, ինչպես է նա կազմակերպ-  
վում:

Այն ծնողները, որոնց երեխաները «չեն  
լսում», երբեմն հակամտ են կարծելու,  
թե հեղինակութիւնը բնութիւնն է տալիս,  
թե դա մի հատուկ տաղանդ է: Եթե տա-  
ղանդ չունես, ապա ոչինչ էլ չես կարող

անել, մնում է միայն հախանձել նրան, ով  
այդպիսի տաղանդ ունի:

Այդ ծնողները սխալվում են: Հեղինա-  
կութիւնը կարող է կազմակերպվել յուրա-  
քանչյուր ընտանիքում և դա նույնիսկ շատ  
դժվար գործ չէ:

Ցավոք սրտի, պատահում են ծնողներ,  
որոնք այդ հեղինակութիւնը կազմակեր-  
պում են սխալ հիմունքներով: Նրանք ձգ-  
տում են, որ երեխաները լսեն իրենց, դա  
նրանց նպատակն է: Բայց իսկապես դա  
սխալ է: Հեղինակութիւնն ու հնազանդու-  
թիւնը չի կարող նպատակ լինել: Մի նպա-  
տակ կարող է լինել միայն՝ ճիշտ դաստիա-  
րակութիւն: Այս միակ նպատակին էլ  
միայն պետք է ձգտել: Երեխայի հնազան-  
դութիւնը այդ նպատակին հասնելու ճա-  
նապարհներից մեկը կարող է լինել միայն:  
Հենց այն ծնողները, որոնք դաստիարակու-  
թեան իսկական նպատակների մասին չեն  
մտածում, հնազանդեցնում են՝ հնազանդեց-  
նելու համար: Եթե երեխաները լսող են,

ծնողները հանգիստ են ապրում: Ահա հենց այդ հանգստութունն էլ նրանց նպատակն է: Ստուգելիս միշտ երևում է, որ ոչ հանգըստութունը, ոչ հնազանդութունը երկար չեն մնում: Կեղծ հիմքերի վրա կառուցած հեղինակութունը միայն շատ կարճ ժամանակ է օգնում, շուտով ամեն ինչ լախտվում է, ոչ հեղինակութունն է մնում, ոչ հնազանդութունը: Պատահում է և այնպես, որ ծնողները կարողանում են հնազանդեցնել, բայց դրա փոխարեն դաստիարակության մնացած բոլոր նպատակները անուշադրության են մատնվում. աճում են, ճիշտ է, հնազանդ, բայց թուլակամ մարդիկ:

Այդպիսի կեղծ հեղինակության շատ տեսակներ կան: Մինք այստեղ քննենք քիչ-շատ մանրամասն այդ տեսակներից մի տասնյակը: Հույս ունենք, որ այդպիսի քննությունից հետո ավելի հեշտ կլինի պարզել, թե ինչպես պետք է լինի իսկական հեղինակութունը: Սկսենք.

ձեռնամանակներից: Սա հեղինա-

կության ամենասարսափելի տեսակն է, թեև ոչ ամենափաստակարգը: Այսպիսի հեղինակությամբ ամենից ավելի տառապում են հայրերը: Եթե հայրը տանը շարունակ մտնելում է, միշտ բարկացած է, ամեն մի հասարակ բանի համար ամպի պես որոտում է, ամեն հարմար ու անհարմար դեպքում զիմում է փայտի, կամ կաշեգոտուն, ամեն մի հարցի կոպտությամբ է պատասխանում, երեխայի ամեն մի հանցանքի համար պատիժ է տալիս—ապա հենց դա էլ ճնշման հեղինակութուն է: Հայրական այսպիսի տեսորը, սարսափի տակ է պահում ամբողջ ընտանիքը, ոչ միայն երեխաներին, այլև մորը: Դա փնաս է բերում ոչ միայն նրա համար, որ վախեցնում է երեխաներին, այլև նրա համար, որ մորը զարճնում է մի ջընչին արարած, որ ընդունակ է միայն սպասուհի լինել: Հարկ չկա ապացուցելու, թե ինչքան փաստակար է այդպիսի հեղինակութունը: Դա ամենևին չի դաստիարակում, դա երեխաներին սովորեցնում է միայն հե-

ուս կենալ սարսափելի հայրիկից, դա առաջ է բերում մանկական ստախոսութիւնն և մարդկային երկչոտութիւնն ու միեւնոյն ժամանակ դա երեխայի մեջ դաժանութիւնն է դաստիարակում: Ընկճված ու կամաղուրդ երեխաներից առաջ են գալիս կամ թուլամորթ, ոչ պիտանի մարդիկ, կամ կամակորի մեկը, որ իրենց ողջ կյանքի ընթացքում վրեժ են առնում ճնշված մանկութեան համար: Դա հեղինակութեան ամենավայրենի տեսակն է, ունենում են ամենամահաբերական ծնողները և վերջերս, բարեբախտաբար, վերանում է:

Տարածուքյան հեղինակութիւն: Կան այնպիսի հայրեր, այլև մայրեր, որոնք լուրջ կերպով համոզված են, թե որպէսզի երեխաները լսեն, պէտք է նրանց հետ ավելի քիչ խօսել, հետո մեալ նրանցից, միայն երբեմն հանդես գալ իրր իշխանավոր: Այս տեսակը հատկապէս սիրում են ինտելիգենտական ընտանիքներում: Այստեղ շարունակ հայրը ինչ որ առանձին կարինետ ունի,

որտեղից նա երբեմն միայն երևում է, ինչպէս քահանայապետ: Նա ճաշում է առանձին, զվարճանում է առանձին, նույնիսկ իրեն վստահած ընտանիքին նա կարգադրութիւններ է անում մոր միջոցով:

Այդպիսի մայրեր էլ են լինում: Նրանք իրենց կյանքն ունեն, իրենց շահերը, իրենց խոհերը: Երեխաները գտնվում են տատի կամ նույնիսկ տնային աշխատողի հսկողութեան տակ:

Ինչ խոսք, որ այդպիսի հեղինակութիւնը ոչ մի օգուտ չի բերում, և այդպիսի ընտանիքը չի կարող սովետական ընտանիք կոչվել:

Սնտապարծուքյան հեղինակութիւն: Ստարածութեան հեղինակութեան մի առանձին ձևն է, բայց գուցե ավելի վնասակար: Սովետական պետութեան ամեն մի քաղաքացի ծառայութիւնն ունի մատուցած: Բայց որոշ մարդիկ կարծում են, որ իրենք ամենավաստակավորներն են, ամենակարևոր գործիչները և այդ կարևորութիւնը ցու-

ցաղբում են ամեն մի քայլափոխում, ցուցադրում են և իրենց երեխաներին: Տանը նույնիսկ նրանք ավելի են ուռչում ու փրփրվում, քան թե աշխատանքի վայրում, նրանց արածը միայն այն է, որ խոսում են իրենց արժանիքների մասին, նրանք մեծամտորեն են վերաբերվում մնացած մարդկանց: Շատ հաճախ պատահում է, որ հոր այսպիսի տեսքից ապշած, երեխաներն էլ են ուղտում գոռոզանալ: Ընկերների առջև նրանք հանդես են գալիս ոչ այլ կերպ, քան գոռոզ խոսքերով, ամեն քայլափոխում կրկնելով՝ իմ հայրիկը պետ է, իմ հայրիկը զրոյ է, իմ հայրիկը բրիգադի հրամանատար է, իմ հայրիկը հռչակավոր մարդ է: Ամբարտավանություն այս միջնորդում բարձրամիտ հայրիկը արդեն չի կարող հասկանալ, թե ինչ ընթացք են բռնել իր երեխաները և ինչպիսի մարդ է դաստիարակում նա: Պատահում է, որ այսպիսի հեղինակություն մայրերն էլ են ունենում. ինչ որ մի առանձին տեսակի զգեստ, կարևոր ծանոթություն,

կուրորտ գնալ—այս բոլորը նրանց չիմք է տալիս պարծենալու, ջոկվելու մյուս մարդկանցից և սեփական հարազատ երեխաներից:

Պեզանսիզմի հեղինակություն: Այս դեպքում ծնողներն ավելի շատ են ուշադրություն դարձնում երեխաների վրա, ավելի շատ են աշխատում, բայց աշխատում են ինչպես բյուրոկրատներ: Նրանք վստահ են, որ երեխաները ծնողների ամեն մի խոսքը պետք է լսեն զոզով, որ խոսքը դա սրբություն է: Իրենց կարգադրությունները նրանք անում են սառը տոնով, ու եթե այդ կարգադրությունն արված է, ապա անմիջապես դա օրենք է դառնում: Այդպիսի ծնողներն ամենից ավելի վախենում են, թե չլինի թե երեխաները մտածեն, թե հայրիկը սխալվեց, թե հայրիկը ամուր մարդ չի: Եթե այդպիսի հայրիկն ասաց. վաղն անձրև կգա, չի կարելի գրոսնելու գնալ ապա եթե վաղը լավ եղանակ էլ լինի, այնուամենայնիվ պետք է ընդունել, որ զբոս-



նելու զնալ չի կարելի: Հայրիկին դուր չի  
եկել ինչ որ կինո-նկար, նա արգելում է  
երեխաներին կինո զնալ, թեկուզ և լավ  
նկար լինի: Հայրիկը պատժում է երեխա-  
յին, հետո պարզվում է, որ երեխան այն-  
քան մեղավոր չի, ինչքան թվում էր սկզբ-  
բում, հայրիկը ոչ մի կերպ չի փոխում կամ  
վերացնում իր պատիժը՝ մի անգամ որ ասել  
եմ, այդպես էլ պետք է լինի, այդպիսի  
հայրիկի համար ամեն օր գործ կլինի, երե-  
խայի ամեն մի շարժման մեջ նա կարգի  
ու օրինականության խախտում է տեսնում,  
ու նոր օրենքներով և կարգադրություններով  
հետապնդում է նրան: Երեխայի կյան-  
քը, նրա շահերը, նրա հասակը աննկատելի  
են անցնում այսպիսի հայրիկի մոտով, նա  
ոչինչ չի տեսնում, բացի իր բյուրեղիրատա-  
կան իշխանությունից ընտանիքում:

Ռեզոնյորուքյան հեղինակուքյան: Այս  
դեպքում ծնողները բառայիտրեն մաշում են  
մանկական կյանքը անվերջ քարոզներով  
ու խրատական խոսակցություններով: Փո-

խանակ երեխային մի քանի խոսք ասելու,  
նույնիսկ կատակի առնով, ծնողը նստեց-  
նում է իր առջև և սկսում ձանձրալի ու  
տաղտկալի ճառը: Այսպիսի ծնողները հա-  
վատացած են, թե խրատներն են պարու-  
նակում մփնկավարժական գլխավոր իմաս-  
տությունը: Այդպիսի ընտանիքներում միշտ  
քիչ է ուրախությունն ու ժպիտը: Ծնողներն  
ամեն կերպ ձգտում են լինել առաքինի,  
նրանք ուղում են երեխաների աչքում լի-  
նել անմեղ: Բայց նրանք մոռանում են, որ  
երեխաները դրանք հասակավորներ չեն, որ  
երեխաներն իրենց կյանքն ունեն և որ այդ  
կյանքը պետք է հարգել: Երեխան ապրում  
է ավելի զգայուն, ավելի բուռն, քան հա-  
սակավորը, նա ամենից ավելի քիչ է կարո-  
ղանում զբաղվել դատողություններով:  
Մտածելու սովորությունը նրա մեջ պետք  
է արմատանա հետեզհետև և բավական զան-  
դազ: Իսկ ծնողների անընդհատ շատախո-  
սությունը, նրանց շարունակ տաղտկալիու-  
թյունն ու շաղակրատությունը համարյա

անհետ անցնում է նրանց գիտակցությու-  
նից: Ծնողները ռեզոնյորության մեջ երե-  
խաները ոչ մի հեղինակություն չեն տես-  
նում:

Սիրո հեղինակություն: Սա մեզ մոտ կեղծ  
հեղինակության ամենատարածված տեսակն  
է: Շատ ծնողներ համոզված են, թե որպես-  
զի երեխաները լսեն, պետք է, որ նրանք  
սիրեն ծնողներին, իսկ այդ սիրուն արժա-  
նանալու համար անհրաժեշտ է ամեն քայ-  
լափոխում երեխաներին ցույց տալ իրենց՝  
ծնողական սերը: Քնքույշ խոսքեր, անվերջ  
համբույրներ, փաղաքշտանքներ, խոստումներ  
թափվում են երեխաների գլխին միանգա-  
մայն ավելորդ քանակությամբ: Եթե երե-  
խան չի լսում, իսկույն հարցնում են նրան.  
կնշանակի, դու հայրիկին չե՞ս սիրում: Ծնող-  
ները եռանդազին հետևում են մանկական  
աչքերի արտահայտությանը և պահանջում  
քնքրություն ու սեր: Հաճախ, երեխաների  
ներկայությամբ պատմում են ծանոթներին՝  
նա օստտիկ սիրում է հայրիկին և օստտիկ

սիրում է ինձ, նա այնպես քնքույշ երեխա է:

Այսպիսի ընտանիքը այնքան է սուղ-  
վում սենտիմենտալության և քնքույշ զգաց-  
մունքների ծովը, որ արդեն ուրիշ ոչինչ չի  
նկատում: Ծնողները ուշադրությունից վրե-  
պում են ընտանեկան դաստիարակության  
շատ կարևոր մանրունքներ: Երեխան ամեն  
բան պետք է անի ի սեր ծնողների:

Այս գիծը շատ վտանգավոր տեղեր ունի:  
Այստեղ է աճում ընտանեկան էգոյիզմը:  
Իհարկե, երեխաներն այդպիսի սիրո համար  
ուժ չեն ունենում: Շատ շուտով նրանք  
նկատում են, որ հայրիկին ու մայրիկին  
ինչպես ասես կարելի է խաբել, հարկավոր  
է միայն այդ բանը քնքույշ արտահայտու-  
թյամբ անել: Հայրիկին ու մայրիկին կա-  
րելի է նույն իսկ վախեցնել, պետք է միայն  
փքվել և ցույց տալ որ սերն սկսում է սառ-  
չել: Երեխան փոքր տարիքից սկսում և հաս-  
կանալ, որ կարելի է մարդկանց շողոքոր-  
թել: Իսկ որովհետև նա չի կարող նույնպի-  
սի ուժգնությամբ սիրել և ուրիշ մարդկանց,

տալա շողոքորթում է նրանց արդեն առանց  
օրե է սիրո, սառն ու ցինիկ հաշիվներով:  
Պատահում է երբեմն, որ գեպի ծնողներն  
ունեցած սերը երկար է պահպանվում, բայց  
մնացած բոլոր մարդիկ դիտվում են իբրև  
կողմնակի և օտար մարդիկ, նրանց նկատ-  
մամբ չկա համակրանք, չկա ընկերականու-  
թյան զգացմունք:


Սա հեղինակության շատ վտանգավոր  
տեսակն է: Նա անեցնում է կեղծավոր ու  
կեղծ էգոիստներ: Ու շատ հաճախ այդպիսի  
էգոյիզմի առաջին զոհերը դառնում են  
իրենք՝ ծնողները:

Բարության հեղինակություն: Սա հեղի-  
նակության ամենաանմխտ տեսակն է: Այս  
գեպընում երեխայի հնազանդությունը կազ-  
մակերպվում է նույնպես մանկական սիրո  
միջոցով, բայց այդ սերը զարթեցվում է  
ոչ թե համբույրներով ու զեղումներով, այլ  
ծնողների գիշումով, փափկությամբ, բա-  
բուրությամբ: Հայրիկը կամ մայրիկը երևում  
են երեխային բարի հրեշտակի կերպարան-

քով: Նրանք ամեն բան թույլ են տալիս,  
ոչինչ չեն խնայում, նրանք ժլատ չեն,  
նրանք երևելի ծնողներ են: Նրանք վախե-  
նում են ամեն մի ընդհարումից, նրանք  
ընտանեկան խաղաղությունը գերազասում  
են, նրանք պատրաստ են ամեն բան զոհել,  
միայն թե ամեն ինչ բարեհաջող լինի: Շատ  
շուտով այդպիսի ընտանիքներում երեխա-  
ներն սկսում են ուղղակի հրամայել ծնող-  
ներին. ծնողները չեն դիմանալը ամենա-  
յայն ասպարեզ է բաց անում մանկական  
ցանկությունները, քմահաճույքները, պա-  
հանջների համար: Ծնողները երբեմն փոք-  
րիկ գիմաղբուրտն են ցույց տալիս, բայց  
արդեն ուշ է, ընտանիքում արդեն վնասակար  
փորձ է կազմվել:

Բարեկամության հեղինակություն: Բավա-  
կան հաճախ, զեռ երեխաները չեն էլ ծըն-  
վել, բայց ծնողների մեջ արդեն պայման  
կա. մեր երեխաները մեր բարեկամները կը-  
լինեն: Ընդհանրապես դա, խհարկե, լավ է:  
Հայրն ու որդին միմյանցից ու պաշտիկը, կարող են

20830-59



բարեկամներ լինել և պետք է բարեկամ լինեն, բայց համենայն դեպս ծնողները մնում են ընտանեկան կոլեկտիվի ավագ անդամները, և երեխաները համենայն դեպս մնում են սաներ: Եթե բարեկամությունը ծայրահեղ չափերի է հասնում, դաստիարակությունն ընդհատվում է կամ սկսվում է հակառակ պրոցեսը՝ երեխաները սկսում են դաստիարակել ծնողներին: Այսպիսի ընտանիքների երբեմն պատահում ենք ինտելիգենցիայի մեջ: Այս ընտանիքներում երեխաները սկսում են ծնողներին Պետկա կամ Մարուսկա ասել, ծիծաղում են նրանց վրա, կոպիտ կերպով ընդհատում են, ամեն քայլափոխում սովորեցնում են. այստեղ ոչ մի հնազանգության մասին խոսք էլ չի կարող լինել: Բայց այստեղ բարեկամություն էլ չկա, քանի որ առանց փոխադարձ հարգանքի ոչ մի բարեկամություն չի լինի:

Կառուսէի հեղինակություն: Հեղինակության ամենամարտոյակն տեսակը, երբ հնազանգությունն ուղղակի գնվում է նվեր-

ներով և խոստումներով: Ծնողներն առանց քաջլիելու, հենց այսպես էլ ասում են՝ կլսես, կգընանք կրկես, կլսես, քեզ համար ձեռք կգնեմ:

Հասկանալի է, որ ընտանիքում էլ հնաքավոր է որոշ լրջախուսանք, միտեսակ պարզեատրման նման մի բան, բայց ոչ մի գեղքում երեխաներին չի կարելի պարզեատրել լսելու համար, դեպի ծնողներն ունեցած լավ վերաբերմունքի համար: Կարելի է պարզեատրել լավ սովորելու համար, մի որևէ, իսկապես զժվար, աշխատանք կատարելու համար: Բայց այս դեպքում էլ երբեք չի կարելի նախապես հայտնել խոստանալիքը և մտրակով քշել երեխային իրենց գպրոցական կամ այլ աշխատանքում զայթակղեցուցիչ խոստումներով:

Մենք քննարկեցինք կեղծ հեղինակության մի քանի տեսակները: Ինչպիսիք սրանցից, էլի շատ տեսակներ կան, կա ուրախության հեղինակություն, գիտնականության հեղինակություն, «լավ տղայի» հեղինակություն, գեղեցիկության հեղինակություն: Բայց հաճախ

պատահում է և այնպես, որ ծնողներն ընդհան-  
րապես ոչ մի տեսակ հեղինակութեան մասին  
էլ չեն մտածում. ապրում են մի կերպ, ոնց որ  
ըլի, և մի կերպ քարշ են տալիս երեխաների  
դաստիարակութունը: Այսօր ծնողը որո-  
տում է և հասարակ բանի համար պատժում  
տղային, վաղը նա սեր է հաշտարարում  
սրան, մյուս օրը իբրև կաշառք ինչ որ բան  
է խոստանում նրան, իսկ հաջորդ օրը նո-  
րից պատժում է և զեռ հանդիմանում էլ է  
իր բոլոր բարի գործերի համար: Այդպիսի  
ծնողները կատարելապես անզոր, կատարելա-  
պես չբժբանելով այն, թե ինչ են անում,  
զես ու զեն են ընկնում ցնդված կատու-  
ների նման: Պատահում է և այնպես, որ  
հայրը հեղինակութեան մի տեսակի կողմ-  
նակից է, իսկ մայրը՝ մի ուրիշ: Այսպիսի  
զեպքում երեխաներն ստիպված են ամե-  
նից առաջ քաղաքագետներ լինել և սովո-  
րել հարմարվել (лабировать) հայրիկի և մայ-  
րիկի միջև:

Կերջապես պատահում է և այնպես, որ

ծնողները պարզապես ուշադրութուն չեն  
դարձնում ե, եխաների վրա և մտածում են  
միայն իրենց հանգստութեան մասին:

Ապա, ուրեմն որը պետք է լինի իսկա-  
կան ծնողական հեղինակութունը սովե-  
տական ընտանիքում:

Ծնողական հեղինակութեան գլխավոր  
հիմքը կարող է լինել միայն ծնողների  
կյանքն ու աշխատանքը, նրանց քաղա-  
քացիական դեմքն ու վարքը: Ընտանիքը  
մեծ ու պատասխանատու գործ է, ծնողնե-  
րը գեկավարում են այդ գործը և զրա հա-  
մար պատասխանատու են հասարակութեան  
առջև, իրենց երջանկութեան առջև և երե-  
խաների կյանքի առջև: Եթե ծնողներն  
այդ գործը կատարում են ազնվութեամբ,  
մտածված, եթե նրանց առջև զրված են  
ձանրակշիռ ու հիասքանչ նպատակներ,  
եթե նրանք իրենք իրենց միշտ լիակա-  
տար հաշիվ են տալիս իրենց արարքները  
ու գործերի համար,— այդ նշանակում է,  
որ նրանք ծնողական հեղինակութուն էլ

ունեն, և պետք չէ ոչ մի ուրիշ հեղինակություն փնտրել՝ ավելի ևս կարիք չկա ոչ մի արհեստական բան հնարել:

Հենց որ երեխաներն սկսում են աճել, նրանք միշտ հետաքրքրվում են, թե որտեղ է աշխատում հայրը կամ մայրը, ինչպիսի հասարակական դիրք ունեն: Որքան կարելի է նրանք շուտ պետք է իմանան, թե ինչով են ապրում, ինչով են հետաքրքրվում և ինչ տեղ են գրավում հասարակության մեջ իրենց ծնողները: Հոր կամ մոր գործը երեխային պետք է երևա իբրև լուրջ, հարգանքի արժանի գործ: Ծնողների մատուցած ծառայությունները երեխաների աչքում ամենից առաջ պետք է լինեն իբրև հասարակության համար մատուցած ծառայություններ, իսկական արժեք և ոչ միայն արտաքինություն: Շատ կարևոր է, եթե այդ ծառայությունները երեխաները տեսնեն ոչ առանձնացած, այլ մեր երկրի նվաճումների ֆոնի վրա: Ոչ թե պարծենկոտու-

թյուն, այլ լավ, սովետական հպարտություն պիտի ունենան երեխաները, բայց միևնույն ժամանակ անհրաժեշտ է, որ երեխաները հպարտանան ոչ միայն իրենց հորով կամ մորով, որ նրանք իմանան մեր հայրենիքի մեծ և անվանի մարդկանց անունները, որ հայրը կամ մայրը նրանց երևակայության մեջ հանդես գան, իբրև մեծ կոլեկտիվի մասնակիցներ:

Ընդ ամին պետք է միշտ հիշել, որ մարդկային ամեն մի գործունեության մեջ կա իր դժվարություններն ու իր արժանիքը: Ոչ մի զեպքում երեխաները ծնողներին չպետք է պատկերացնեն, իբրև իրենց ասպարիզի ռեկորդսմենները, իբրև ոչ մի բանի հետ չհամեմատվող հանճարներ: Երեխաները պետք է տեսնեն և ուրիշ մարդկանց ծառայությունները և անպատճառ իրենց հոր և մոր մոտիկ ընկերների ծառայությունները: Ծնողների քաղաքացիական հեղինակությունը միայն այն ժամանակ իսկական բարձրության

վրա կլինի, եթե դա նորելուկի (ВЫСКОЧКА) կամ սնապարծի հեղինակությունն չէ, այլ կուեկտիվի անդամի հեղինակությունն: Եթե ձեզ հաջողվի ձեր որդուն դաստիարակել այնպես, որ նա հպարտանա այն ամբողջ գործարանով, որտեղ աշխատում է հայրը, եթե նրան ուրախացնեն այդ գործարանի հաջողությունները, կնշանակի դուք նրան ճիշտ եք դաստիարակել:

Բայց ծնողները պարտավոր են հանդես գալ ոչ միայն իբրև իրենց կուեկտիվի սահմանափակ ֆրոնտի գործիչներ: Մեր կյանքը համաշխարհային ռևոլուցիայի կյանքն է: Հայրն ու մայրն իրենց երեխաների առջև պետք է հանդես գան իբրև այդ կյանքի մասնակիցներ: Չինաստանի դեպքերը, գրականության նվաճումները, որևէ ցուցահանդես, — ամեն ինչ պետք է արտացոլվի հոր մտքերում, նրա զգացմունքներում, նրա ձգտումներում: Միայն այսպիսի ծնողները, որ ապրում են մեր երկրի քաղաքացիների լի կյանքով, կա-

րող են երեխաների աչքում իսկական հեղինակություն ունենալ: Ընդ սմին չկարծեք, խնդրեմ, որ այսպիսի կյանքով դուք պետք է «գիտամբ» ապրեք, որպեսզի երեխաները տեսնեն, որպեսզի դարձացնեք նրանց ձեր հատկություններով: Դա արատավոր դրույթ է: Դուք պետք է անկեղծորեն, իսկապես ապրեք այդպիսի կյանքով, դուք չպետք է ամեն կերպ ձգտեք ցուցադրել այն երեխաների առջև: Սնհոզ եղեք, նրանք իրենք կտեսնեն այն ամենը, ինչ պետք է:

Բայց դուք միայն քաղաքացի չեք: Դուք հայր էլ եք: Ու դուք ձեր ծնողական գործը պետք է կատարեք որքան կարելի է լավ և այդ է ձեր հեղինակության արժանիքը: Ու ամենից առաջ դուք պետք է իմանաք թե ինչնով է ապրում, ինչնով է հետաքրքրվում, ինչ է սիրում, ինչ չի սիրում, ինչ է ուզում և ինչ չի ուզում ձեր երեխան: Դուք պետք է իմանաք, թե, ում հետ է նա բարեկամություն ունենում, ում հետ է լա-

զում, ինչ է խաղում, ինչ է կարգում, ինչ պես է ըմբռնում կարգացածը: Երբ նա սովորում է դպրոցում, ձեզ պետք է հայտնի լինի, թե ինչպես է վերաբերվում նա դպրոցին և ուսուցիչներին, ինչի մեջ է զբավարանում, ինչպես է պահում իրեն դասարանում: Այս բոլորը դուք պետք է իմանաք միշտ, ձեր երեխայի ամենափոքր հասակից սկսած: Դուք անսպասելի կերպով չպիտի իմանաք զանազան անախորժությունների ու կոնֆլիկտների մասին, դուք պետք է կանխապես իմանաք և նախագուշակեք:

Այս բոլորը պետք է իմանալ բայց դա ամենևին չի նշանակում, որ դուք մշտական ու ձանձրալի հարց ու փորձով, էփանազին և զզվեցնող լրտեսությամբ պետք է հետևեք ձեր որդուն: Հենց սկզբից դուք այնպես պիտք է գնեք գործը, որ երեխաներն իրենք պատմեն ձեզ իրենց գործերի մասին, որ իրենք ուզենան պատմել ձեզ, որ նրանք շահագրգռված լինեն ձեր իմանա-

լով: Երբեմն դուք պետք է իբրև հյուր հրավիրեք ձեր որդու ընկերներին, նույնիսկ հյուրասիրեք մի բանով, երբեմն ինքներդ պետք է լինեք այն ընտանիքում, որտեղ լինում են այդ ընկերները, դուք պետք է առաջին հնարավորության դեպքում ծանոթանաք այդ ընտանիքին:

Այս բոլորի համար շատ ժամանակ չի պահանջվում, որա համար պետք է միայն ուշադրություն դարձնել երեխաների և նրանց կյանքի վրա:

Եվ եթե դուք ունենաք այդպիսի իրազեկություն և այդպիսի ուշադրություն, դա ձեր երեխաների համար աննկատելի չի անցնի: Երեխաները սիրում են այդպիսի իրազեկություն և դրա համար հարգում են ծնողներին:

Իմանալու հեղինակությունն անհրաժեշտաբար կրերի և օգնելու հեղինակություն: Ամեն մի երեխայի կյանքում շատ դեպքեր են լինում, երբ նա չգիտե թե ինչպես վարվի, երբ նա կարիք է զգում



խորհրդի ու օգնութեան: Գուցե նա ձեզա-  
նից օգնութեան չխնդրի, որովհետև չգի-  
տես այդ անել, դուք ինքներդ պետք է նը-  
քան օգնութեան գաք:

Հաճախ այդ օգնութեանը կարող է լի-  
նել ուղղակի մի խորհուրդ, երբեմն մի  
կատակ, երբեմն կարգադրութեան, երբեմն  
նույնիսկ հրաման: Եթե դուք լավ գիտեք  
ձեր երեխայի կյանքը, դուք ինքներդ կը-  
տեսնեք, թե ինչպես վարվեք ամենալավ  
ձևով: Հաճախ պատահում է, որ այդ օգ-  
նութեանը պետք է ցույց տալ առանձին  
միջոցով: Կամ կարիք է լինում մասնակ-  
ցել նրանց մանկական խաղին, կամ ծա-  
նոթանալ երեխաների ընկերներին, կամ  
անցնել դպրոց և խոսել ուսուցչի հետ:  
Եթե ձեր ընտանիքում մի քանի երեխա-  
ներ կան, իսկ դա ամենտերջանիկ գեպքն  
է, այդպիսի օգնութեան գործին կարող են  
մասնակցել մեծ եղբայրներն ու քույրերը:

Մտողական օգնութեանը կաշուն, ձան-  
ձրբացնող, հոգեմաշ չպիտի լինի: Որոշ գեպ-

քերում միանգամայն անհրաժեշտ է թող-  
նել, որ երեխան ինքը դուրս գա դժվարու-  
թեաններից, պետք է, որ նա վարժվի  
հաղթահարել արգելքները և ավելի բարդ  
հարցեր լուծել: Բայց շարունակ պետք է  
հետևել, թե երեխան ինչպես է կատա-  
րում այդ գործողութեանը, չի կարելի  
թույլ տալ, որ նա խճճվի և հուսահատվի:  
Երբեմն նույնիսկ պետք է, որ երեխան  
տեսնի ձեր զգույշ հետևելը, ձեր ուշա-  
դըրութեանը, ձեր վստահութեանն իր ու-  
ժերին:

Օգնութեան, զգույշ և ուշադիր ղեկավա-  
րութեան հեղինակութեանը երջանիկ կեր-  
պով լրացնում է իմանալու հեղինակութեանը:  
Երեխան կզգա ձեր ներկայութեանը,  
ձեր խոհեմ հոգատարութեանը, ձեր հովա-  
նավորութեանը, բայց միևնույն ժամանա-  
նա կիմանա, որ դուք նրանից պահանջում  
եք մի բան, որ դուք մտադիր չեք նրա  
տեղ ամեն բան անել, վերացնել նրա պա-  
տասխանատվութեանը:

Անա հենց պատասխանատվութիւն  
գիծը ծնողական հեղինակութեան հետևյալ  
կարևոր գիծն է: Ոչ մի դեպքում երեխան  
չպետք է կարծի, որ ձեր ղեկավարու-  
թյունն ընտանիքին և իրեն ձեր բավա-  
կանությունն ու զվարճությունն է: Նա  
պետք է գիտենա, որ դուք սովետական  
հասարակութեան առջև պատասխանատու  
եք ոչ միայն ձեր, այլ և նրա համար:  
Չպետք է վախենալ պարզ ու հաստատուն  
կերպով ապել որդուն կամ աղջկանը, որ  
նրանք դատարարակիւմ են, որ նրանք ղեռ  
շատ բան պիտի սովորեն, որ նրանք լավ  
քաղաքացիներ և լավ մարդիկ պիտի դառ-  
նան, որ ծնողները պատասխանատու են  
այդ նպատակին հասնելու համար, որ  
նրանք չեն վախենում այդ պատասխանատու-  
թյունից: Պատասխանատվութեան այդ  
գծից են բխում ոչ միայն օգնութեան  
այլ և պահանջի սկզբունքները: Որոշ ղեկ-  
քերում այդ պահանջը պետք է արտա-  
հայտվի ամենախիստ ձեռով, որը չի թույլա-

տըրում առարկություններ: Ի միջի այլոց,  
պետք է ապել, որ այդպիսի պահանջն օգ-  
տակար կարելի է դարձնել միայն այն  
ժամանակ, եթե երեխայի պատկերացման  
մեջ արդեն ստեղծված է պատասխանա-  
տվութեան հեղինակությունը: Նույն իսկ  
ամենափոքր հասակում նա պետք է զգա,  
որ իր ծնողներն ու ինքը անմարդաբնակ  
կողմում չեն ապրում:

Վերջացնելով մեր զրույցը համառոտ  
ամփոփենք ասածներս:

Ընտանիքում հեղինակությունն ան-  
հրաժեշտ է:

Պետք է իսկական հեղինակությունը  
տարբերել կեղծ հեղինակությունից, որը  
հիմնվում է արհեստական սկզբունքների  
վրա և ձգտում է ամեն տեսակ միջոցնե-  
րով հնազանդություն ստեղծել:

Իսկական հեղինակությունը հիմնվում  
է ձեր քաղաքացիական գործունեութեան  
վրա, ձեր քաղաքացիական զգացմունքի

վրա, ձեր՝ երեխայի կյանքն իմանալու վրա,  
ձեր՝ նրան հասցրած օգնութեան վրա և  
ձեր պատասխանատուութեան վրա՝ նրա  
դատարարակութեան համար:

„Искусств“, № 21, 1940 г.



Սրբազրիչ՝ Կ. Գոգոյան  
Կոնսրու սրբազրիչ՝ Մ. Գարոնիկյան  
Հանձնված է արտադրութեան 1940 թ. 29 X  
Ստորագրված է տպագրութեան 1940 թ. 4 XI  
ՎՃ 2469, հրատ. № 87, պատ. № 258, տիրած 5000

Լուսերատի տպարան, Երևան, Տերյան № 127

ԳԻՆԸ 50 Կ.

А. МАКАРЕНКО

**О РОДИТЕЛЬСКОМ АВТОРИТЕТЕ**

(Из литературного наследия  
писателя-педагога)

ПРОСИЗДАТ

---

Ереван, тип. Просиздат, ул. Терян № 127

« Ազգային գրադարան



NL0222003

45. 739